

տառապեալս յողնատեսակ և զանազանից նեղութեանց, կրելով յարածամ ի ձեռանէ մեռայնոց և յօտարաց, ի հայոց և ի ֆրանկաց, ի մերձատրաց՝ և ի հեռատրաց, ի կերպարանեցեալ բարեկամաց, և յանձնախնդիր թշնամեաց, որք միանգամայն համարէին փշրել զվտիտ անձն իմ ժանեօք կամակորուսեանց իւրեանց, և կենդանւոյն մուծանել զիս ի յերկիր: Ուտի և իմ ի յաշարկու սրտարեկութեանցս յայցցանեաց, պակուցեալ սասանեցայ, և կամ, զի դեռևս եմ մատնեցեալ: և ոչ զոր գտի ճշմարտի այցելու ինձ, ի պանդխտակողովո՞՞ն նեղութեանս իմում: Վասն զի ի տեարց իմոց և ի բարեկամաց, յաւէտ ի Հոգևոր տիրէն Տեառն Յակօրայ¹³ գործարանիս և գործակալացն իւր բարեխնամի, ոչ բնկալայ բնաւ զհամբաւս յուսոյ ազատութեան: Ընդ որս այսու ամենայնի անյաջողութեամբ, եղէ ողորմելի քան զամենայն նեղեալս կրկրի: որովք ամենայն վիշտք և շարշարանք կոչեցան ինձ հայր, տառապանք և կսկիծք տնտանեցան ինձ մայր: կշտամբանք և բնաւք հարուածք, ասացան ինձ թոյր և եղբայր բնդ որս և իմ բազմեալ ի գլուխս ողբերգակցաց զսուր տրտմութեամբ և զամենայն աղետս համբերութեամբ ստացայ կենաց իմոց սատար: Վասն որոյ սրտահառայ մաղթանօք հայցեմ ի ձէնջ ցաւակցիւ և ձեզ ինձ բստ իս ի շարշարանս իմ...»:

4. ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ՆԵՐՈՂՈՒԹԵԱՆՅ: Լիվոնոն, 1702, 16 դժափակ էջ: Հանրային գրադարան, № 552:

Անվանաթերթ՝ Մեկնութիւն ներողութեանց Որք շնորհին յեկեղեցայ ի ձեռն Սրբազանի Փափին: Հանդերձ խրատիւք, և Աղօթիւք ոմամք: Բաժանեցեալ յերիս գլուխս. Յամի Տեառն 1702:

Հրատ. վայրը նշված չէ, բայց տպագրութիւնը ամեն ինչով նման է Լիվոնոնոյի այդ շրջանի տպագրութիւններին, մասնավորապես 1701-ին այդ քաղաքում տպագրված «Թէոփիլոսին», և կասկած չի մնում, որ Լիվոնոնոյի տպագրութիւնն է:

5. ՊԱՐԶԱՏՈՄԱՐ: Ամստերդամ, տպ. Դուկաս Վանանդեցու, 1714, 79 դարդափակ էջ: Մատենադարան, № 1442:

Անվանաթերթ՝ Պարգատումար ի վերայ Ագարիայի ամսոցն կարգեալ: Տպագրեալ ի յիշատակ Զուղայեցի Խաղարենց Խօջայ Ովանին, և իւր որդոյն բալիդ Շղալենց Վարդանիսի որդոց Պարոն Արիստակէսին, Պարոն Մանուկին, լուսահոգի Սաֆարին, Վարդանիսի կողակից Փարանին և դստերն Սահրդիստինն. նաև փոքրիկ Զաֆարիային, որոյ ծախիւքն տպեցաւ Պարգատումարս այս: Ի հայրապետութեան Սրբոյ էջմիածնի Տեառն Աղեքսանդրի Սրբազան Կարողիկոսի ամենայն Հայոց յԱմի Տեառն 1714: Ի մեծ Թովն Հայոց 1163: Ի Տպարանի Վուկասու Իպրի: ՅԱմստերդամ:

Հիշատակարան չունի:

Վանանդեցիների տպագրութիւնները (1685—1717) ներկայացնող հայ և այլալեզու մատենագիտական ցանկերում Պարգատումար վերնագրով գիրք չի հիշվում: Միայն Զարբհանալյանը իր «Պատմութիւն հայկական տպագրութեան» աշխատութեան մեջ (էջ 170), ասում է, որ 1699-ին Վանանդեցիները տպագրել են Պարգատումար կամ Տումար, որը կասկածելի տեղեկութիւնն է թիւում, մանավանդ, որ հենց իր՝ Զարբհանալյանի մատենագիտութեան մեջ նման գիրք չի մտել: Վանանդեցիների տպարանից դուրս եկած Պարգատումար անունն ունեցող միակ գիրքը 1714-ի այս տպագրութիւնը պիտի լինի, որը շատ հազվագյուտ է և ծանոթ չի եղել մեր մատենագետներին (տես նկ. 3):

4. ՊԱՍԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6. ՍԱՂՄՈՍԱՐԱՆ: Կ. Պոլիս, տպ. Ստեփանոս Պետրոսյանի, 1770, 377 ճշ հ.) դարդափակ էջ, պատկերներ, զարդեր: Հանրային գրադարան, № 1016:

¹³ Խոսքը էջմիածնի կաթողիկոս Հակոբ Զուղայեցու մասին է: